Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

ՏՀՏ հանրության վիճակագրություն

Գործունեություն Զ.6՝ Ներդրման վերանայում

Ծրագրի մասնակիցներ՝

Մարտին Լունդո (Դանիայի վիճակագրություն)
Ինգրիտ Պերսոն (Շվեդիայի վիճակագրություն)

Հայաստան, 2012 թ. նոյեմբերի 19–23-ը

Տարբերակ՝ վերջնական տարբերակ

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Դանիայի վիճակագրություն

Շվեդիայի վիճակագրություն

Հեղինակների կոնտակտային տվյալներ

Մարտին Լունդո *(Բաղադրիչի ղեկավար)*
Sejrøgade 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 39173873
MLU@dst.dk

Ինգրիտ Պերսոն
Շվեդիայի վիճակագրություն
Karlavägen 100
104 51 Ստոկհոլմ
Շվեդիա
Էլ փոստ՝ ingrid.persson@scb.se

Բովանդակություն

1. Ամփոփ նկարագիր 4
2. Ընդհանուր մեկնաբանություններ և նախապատմություն 4
3. Բաղադրիչի աշխատանքների իրականացման վերանայում 5
4. Եզրափակիչ առաջարկությունները և ապագա հետազոտությունների պլանավորումը 7

Հավելվածներ

Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք 11
Հավելված 2 Առաքելության ծրագիրը 13
Հավելված 3 Հանդիպումներ անձանց հետ 14
Հավելված 4 Հայաստանի նախարարություններում ՏՀՏ օգտագործման մամուլի հաղորդագրություն 17
Հավելված 5 Կշռման կարևորությունը՝ օրինակ 21

Արտաքին հավելվածներ (չեն հրապարակվելու կայք էջում)

Հայաստանի կազմակերպություններում և հաստատություններում ՏՀՏ-ի օգտագործումը (փորձնական հետազոտության զեկույց)

1. Հապավումներ ցանկ

ՇԵ	Շահառու երկիր
ԱՊ	Անդամ Պետություն
ԱՊՓ	Անդամ Պետությունների փորձագետներ
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՀՀԱՎԾ	Հայաստանի հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

2. Ամփոփ նկարագիր

Զեկույցի մեջ ներկայացված է Հայաստանի կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման ապագա հետազոտության մեթոդաբանությունը: Այսպիսով, ամփոփվեց Թվինինգ նախագծի շրջանակում իրականացված աշխատանքը, և ԱՊ փորձագետները ներկայացրեցին իրենց վերջին առաջարկությունները ՀՀ ԱՎԾ-ի ՇԵ փորձագետներին: Առաջարվում է, աստիճանաբար փոփոխություններ ներկայացնել հարցաթերթի մեջ, և օգտագործել հետազոտության առաջին տարիները հիմնական ցուցանիշների համար ժամանակային շարքերի հիմնադրման համար: Ընտրանքի կառուցվածքը պետք է համապատասխանի ԵՄ չափանիշներին , սակայն հաշվի առնելով Հայաստանի բիզնես ժողովրդագրության առանձնահատկությունները, հավանավար հնարավոր է ընտրանքի մեջ նաև ներառել 10-ից քիչ աշխատակից ունեցող կազմակերպությունները:

Արդյունքների կշռում չի իրականացվում փորձնական հետազոտությունների ընթացքում, սակայն այն շատ կարևոր է ապագա հետազոտությունների որակի համար:

Մշակվեց պլանավորման գործիք առաջին ընտրանքի և հետագա տարիներին իրականացվող հետազոտությունների համար:

3. Ընդհանուր մեկնաբանություններ և նախապատմություն

Առաքելության զեկույցը նախապատրաստվել է որպես “Աջակցություն ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով” Թվինինգ նախագծի ”ՏՀՏ հանրության” բաղադրիչի Զ 6 գործունեության փորձագետների կարճատև առաքելության արդյունք:
Նախքան Զ.6 գործունեությունը ամփոփվեց և շահառուներին ներկայացվեց “ՏՀՏ օգտագործումը կազմակերպություններում և հաստատություններում” զեկույցը: Փորձնական հետազոտության զեկույցում ներկայացված է, որ ՀՀ ԱՎԾ-ն պատրաստ է իրականացնել կազմակերպություններում և հանրային մարմիններում ՏՀՏ-ի օգտագործման ամբողջական հետազոտություն:
Փորձնական հետազոտությունը և Հայաստանի նախարարությունների կողմից ՏՀՏ-ի օգտագործման հետագա մամուլի հաղորդագրությունը վկայում են բաղադրիչի պարտադիր արդյունքի ձեռք բերման մասին, այն է՝ “Կազմակերպությունների և հաստատությունների ՏՀՏ հետազոտությունը կիրականացվի և տվյալները կհրապարակվեն”

Մասնավորապես, պարտադիր արդյունքը ձեռք է բերվել հաշվի առնելով կառավարող նիստերի քննարկումները և նախագծի ղեկավարների և ԵՄ պատվիրակության միջև նամակագրությունը՝ պարտադիր արդյունքի մեկնաբանման վերաբերյալ:

Բաղադրիչ Զ-ի աշխատանքների շնորհիվ ՀՀ ԱՎԾ –ն ամբողջովին պատրաստ է իրականացնելու ՏՀՏ հետազոտությունը: Փորձնական հետազոտության շրջանակում մշակվեցին արտադրական համակարգեր տվյալների հավաքագրման, սխալների ուղղման, ինչպես նաև աղյուսակների կազմման համար և կարդիականացվեն առաջին ամբողջական հետազոտության ընթացքում՝ կրկին օգտագործելու նպատակով:

Արդյունքների որակի և ներկայացուցչության համար կարևոր է ՀՀ ԱՎԾ-ի բիզնես ռեգիստրի օգտագործումը՝ ընտրանքի կշռման և վերահսկման համար: Այս գործունեությունների կատարման համար առկա են բոլոր հմտությունները:

ԱՊ փորձագետները ցանկանում են շնորհակալություն հայտնել ՀՀ ԱՎԾ-ի ողջ անձնակազմին՝ մասնավորապես Պրն. Ա. Անանյանին և Տկն. Ա. Հարությունյանին արդյունավետ տեղեկատվության տրամադրման համար, ինչպես նաև ողջ նախագծի իրականացման շրջանակում բաց և սերտ համագործակցության համար:

Ձեռք են բերվել Զ.6 գործունեության ակնկալվող արդյունքները (տես հավելված 1) և առաքելության ծրագիրը (հավելված 2):

4. Բաղադրիչի աշխատանքների իրականացման վերանայում

Զ1-Զ2:Խնդրների նույնականացում

Առաջին առաքելության ընթացքում (որը տեղի ունեցավ 2011 թ. մարտ ամսին) ներկայացվեց Հայաստանում կազմվող ՏՀՏ վիճակագրությունը: ՀՀ ԱՎԾ արդեն կազմում է ՏՀՏ վիճակագրություն առաջարկի մոտեցմամբ (ՏՀՏ հատված) և պահանջարկի մոտեցմամբ (ՏՀՏ-ի օգտագործումը տնային տնտեսություններում): Ի լրումն, Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամը նույնպես արտադրում է վիճակագրություն առաջարկի մոտեցմամբ և տնային տնտեսությունների կողմից ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ:

Ներկայացվեց ԵՄ կանոնակարգը, առաջարկությունները, ինչպես նաև ԱՊ փորձագետների փորձը կազմակերպություններում և պետական հատվածում ՏՀՏ վիճակագրության վարման մասին (չնայած պետական մարմինները ընդգրկված չեն ԵՄ շրջանակի մեջ):

Հետազոտության իրականացման համար չբացահայտվեցին որևէ լուրջ խոչընդոտներ, բացի ռեսուրսների բացակայությունից: Հետազոտության անցկանցման համար կազմվեց աշխատանքային ծրագրի նախագիծ: Հիմնվելով ներկայիս միջազգային ցուցանիշների վրա՝ կազմվեց սպառողների կարիքների նախագիծ տարբերակը, որը այնուհետև քննարկվեց հիմնական շահառուների հետ:

Զ5: Ուսուցողական այցելություն

Դանիայում իրականացած ուսուցողական այցելության ընթացքում (2011 թ. օգոստոս ամսին) ներկայացվեց Դանիայի ՏՀՏ վիճակագրության համակարգը և դրա կապը ԵՄ կանոնակարգի հետ: ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացվեց կազմակերպություններում ՏՀՏ-ի օգտագործման հարցաթերթի նախագիծ տարբերակը:

Զ3: Ընտրանքի մեթոդ

Ընտրանքի մեթոդի առաքելության ընթացքում (որը տեղի ունեցավ 2011 թ. նոյեմբերին) վերանայվեցին նախորդ գործունեությունները և կատարվեց ընտրանքի նախագծի վերլուծություն:

Նշվեց, որ նախագիծ հարցաթերթը համապատասխանում է ԵՄ չափանիշներին: Այն ներկայացվեց արտաքին շահառուներին, և առաքելության ընթացքում կազմակերպվեց

սեմինար: Շահառուները ներկայացրեցին իրենց կարծիքը, և որոշվեց կազմակերպել լրացուցիչ լսումներ հարցաթերթի վերաբերյալ:

Հաշվի առնելով ռեսուրսների բացակայությունը՝ ՀՀ ԱՎԾ որոշում կայացրեց իրականացնել փորձնական հետազոտություն ընդգրկելով սահմանափակ քանակությամբ կազմակերպությունների ընտրանք և շեշտը դնելով մեթոդաբանական փորձի ձեռքբերման վրա: Այս հանգամանքը նաև քննարկվեց կառավարող նիստի ընթացքում: Հետազոտության մեջ ընդգրկվեց նաև պետական (17 նախարարություններ)՝ կազմակերպությունների ճշգրտված հարցաթերթի տարբերակին համաձայն:

Քննարկվեց ընտրանքի նախագիծը ամբողջական հետազոտության համար ԵՄ չափանիշներին և Հայաստանի կարիքներին համաձայն: ՀՀ ԱՎԾ աշխատակիցները կազմեցին կազմակերպությունների համակցության աղյուսակներ, որոնք համադրելի էին ԵՄ մոդել հետազոտությանը:

Հայաստանի վիճակագրության համար ընդունելի է տարածման իրականացումը ըստ մարզերի: Այնուամենայնիվ, կազմակերպությունների մոտ 70 տոկոսը գտնվում է Երևան քաղաքում և ընտրանքի վրա հիմնված ծածկույթ յուրաքանչյուր մարզի համար բարդ խնդիր է: Մարզային մակարդակը չի կազմում ԵՄ պահանջները (մինչդեռ ԱՊ ներկայացվում է հայտ ըստ տարածաշրջանների բաշխման ներկայացման համար):

Ներկայացվեցին նաև այլ մեթոդաբանական առաջարկություններ ներառյալ կշռում և այլ տեսակի տվյալների մշակում (սխալների ուղղում, աղյուսակների մեջ տվյալների ներկայացման ծրագիր):

Փորձնական հետազոտության ընտրանքի ստրատան առաջարկվեց հիմնվելով 4 չափսի խմբերի (աշխատակիցների քանակը) և 4 գործունեությունների (Nace դասակարգում) խաչաձև աղյուսակների վրա :

Զ4.1: Տվյալների մշակման վերլուծություն

Նախքան սույն առաքելությունը (որը տեղի ունեցավ 2012 թ. մայիս ամսին) ՀՀ ԱՎԾ իրականացրեց փորձնական հետազոտություն կազմակերպությունների և հաստատությունների համար: (տես փորձնական հետազոտության մասին պարբերությունը):

Նախքան առաքելությունը ԱՊ փորձագետներին տրամադրվեցին համապարփակ նյութեր (անանուն տվյալների շարքեր, ելքային աղյուսակներ):

Առաքելության ընթացքում իրականացվեց տվյալների վերլուծություն: Կազմվեց փորձնական հետազոտության զեկույցի կառուցվածքը, ինչպես նաև ՏՀՏ վիճակագրության բաղադրիչի աշխատանքային ծրագիրը: Նաև որոշում ընդունվեց, որ բաղադրիչ Զ վերջնական արդյունքը կլինի ապագա ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ հետազոտությունների ռազմավարությունը:

Զ4.2: Ընտրանքի օպտիմալացում

Շարունակվեց բիզնես ռեգիստրի հիմնան վրա կազմված աղյուսակների վերլուծությունը և մշակվեց ամբողջական հետազոտության ընտրանքի ռազմավարությունը՝ ներկայացնելով մի քանի ալընտրանքային լուծումներ ապագա ռազմավարության համար:

Համաձայնեցվեցին ընտրանքի հիմնական սկզբունքները՝ ռեգիստրի վրա հիմնված տվյալների օգտագործում, պատահական շերտավորված ընտրանք, ստրատա ըստ չափսի խմբի և գործունեության տեսակի (NACE rev. 2)

Այլընտրանքային լուծումները կախված են ընտրանքի շերտավորման մեջ մարզային մակարդակի ներառման, կամ բացառման հետ:

Փորձնական հետազոտություն

Համաձայնեցված հարցաթերթը փորձարկվեց 100 կազմակերպություններում: Տվյալների հավաքագրումը տեղի ունեցավ 2012 թ. փետրվար և մարտ ամիսներին:

Կազմակերպությունների փորձնական հետազոտությունը ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- Պարտադիր է, ինքնակառավարվող հարցթերթերի միջոցով
- 100 կազմակերպություններ միայն Երևան քաղաքից
- Ընտրվել են 16 ստրատաներ (չորս ոլորտի խմբեր, չորս չափսի խմբեր)

Հաշվի առնելոց կազմակերպությունների փոքր քանակը՝ կշռում չի իրականացվել: Հիմնականում այս արդյունքները ներկայացուցչական են միայն թիրախային համակցության համար և չեն կարող ներկայացվել որպես վիճակագրություն:

Ռեսպոնդենտների հետ կապի հաստատման միջոցով նույնականացվեցին ցուցանիշներին առնչվող որոշ հարցեր: Նմանատիպ խնդիրներ նաև լինում են ԵՄ անդամ պետություններում հետազոտության իրականացման ընթացքում: Այդպիսով, դրանք հատուկ չեն միայն ՀՀ ԱՎԾ-ի համար, դրանք պարզապես ստանդարտ պայմաններ են ՏՀՏ հետազոտության իրականացման համար:

Որպես լրացում կազմակերպությունների հետազոտությանը իրականացվել է նաև հետազոտություն 17 նախարարություններում՝ հիմնվելով կազմակերպությունների հարցաթերթի ճշգրտված տարբերակի վրա: Բարձր ծածկույթը հնարավոր է դարձնում տվյալների տարածումը, և ՀՀ ԱՎԾ որոշում է կայացրել հրապարակել արդյունքները կայք էջում:

Վերջնական հարցաթերթը և մեթոդաբանական տեղեկատվությունը ներկայացված են փորձնական հետազոտության զեկույցի մեջ (ՀՀ ԱՎԾ 2012 թ, նոյեմբերի 13):

5. Եզրափակիչ առաջարկությունները և ապագա հետազոտությունների պլանավորումը

Սույն առջարկությունները համաձայնեցված են ԱՊ և ՇԵ փորձագետների միջև որպես ապագա հետազոտության ուղեցույց՝ հետազոտության ֆինանսավորման դեպքում: Խնդրում ենք անդրադառնալ նախորդ առքելության զեկույցին և փորձնական հետազոտության զեկույցին մեթոդաբանության լրացուցիչ փաստաթղթվորման համար: Բաղադրիչ Զ-ի շրջանակում կատարված աշխատանքները ապացուցեցին, որ ՀՀ ԱՎԾ կարող է իրականացնել ՏՏ հետազոտություն: Իրականացվել է ԵՄ մեթոդաբանության վերլուծություն և այն ճշգրտվել է Հայաստանում ամբողջական հետազոտության իրականացման համար և փորձարկվել փորձնական հետազոտության ընթացքում:

Առաջին ամբողջական հետազոտության համար կրկին կօգտագործվի արտադրության համակարգերը՝ տվյալների հավաքագրման, սխալների ուղղման, աղյուսակների մեջ տվյալների ներկայացման համար, որը մշակվեց փորձնական հետազոտության համար:

Արդյունքների որակի և ներկայացուցչական լինելու համար կարևոր կլինի բիզնես ռեգիստրի օգտագործումը ընտրանքի, կշռման և վերահսկման համար: Մեթոդաբանության բաժինը տեղյակ է անհրաժեշտ մեթոդների մասին և ունի բավարար գիտելիքներ այն իրականացման համար:

4.1 Հետազոտության մեթոդաբանության հիմնական սկզբունքները

Ներդաշնակեցված վիճակագրություն ունենալու համար, որը համադրելի կլինի ԵՄ երկրներին ՀՀ ԱՎԾ-ն կօգտագործի ԵՄ թիրախային համակցության, ընտրանքի փոփոխականների սահմանման միևնույն մոտեցումը :

Թիրախային համակցությունը ԵՄ չափանիշներին հետևելու սկզբնակետն է: Շերտավորումը ըստ գործունեության տեսակի և չափսի խմբերի հնարավոր է դարձնում արդյունքների տրամադրումը ստանդարտ ԵՄ բաշխմամբ: Այնուամենայնիվ, տարածումը ազգային մակարդակի վրա պարտադիր չէ ԵՄ չափանիշներին համաձայն և հիմնականում պետք է հաշվի առնվեն ազգային առանձնահատկությունները:

Ի լրումն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշ առաջարկությունները որոշակի չեն ՏՀՏ հետազոտությունների համար: Օրինակ՝ անհրաժեշտ է կիրառել կշռում և ընտրանքի շերտավորում, սակայն դրանց մեթոդաբանությունը չի տարբերվում այլ ընտրանքային հետազոտությունների ընթացքում առաջարվող մեթոդաբանությունից:

4.2 Ծածկույթ/թիրախային համակցություն

Հետազոտության թիրախային համակցությունը կլինի՝

- 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպությունը
- և կներառի հետևյալ ոլորտները

Կազմակերպություններ դասակարգված NACE Rev. 2 համաձայն

- Բաժին C – *“Վերամշակում”*;
- Բաժին D,E – *“Էլեկտրականություն, գազ, և գոլորշի, ջրամատակարարում և թափոնների կառավարում”*;
- Բաժին F – *“Շինարարություն”*;
- Բաժին G – *“Մեծածախ և մանրածախ առևտուր ավտոմեքենաների և մոտոցիկլետների վերանորոգում*
- Բաժին H – *“Փոխադրում և պահեստավորում”*;
- Բաժին I – *“Տեղավորման և պարենային ծառայությունների գործունեություն”*;
- Բաժին J – *“Տեղեկատվություն և հաղորդակցում ”*;
- Բաժին L – *“Անշարժ գույքի գործունեություն”*;
- Խումբ 69 -74 – *“Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն”*;
- Բաժին N - *"Վարչական և աջակցման գործունեություն";*
- Խումբ 95.1 - “Համակարգիչների նորոգում”;

Այս դասակարգումը համապատասխանում է թիրախային համակցությանը ըստ ԵՄ կանոնակարգի անդամ պետությունների համար կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման և էլ-կոմերցիայի հետազոտությունների համար:

ԵՄ երկրների համար նաև պարտադիր չէ հետազոտության մեջ ներառել գեր փոքր կազմակերպությունները 1-4 և/կամ 5-9 աշխատակիցներով: Մեկ, կամ մի քանի տարի անց համապատասխան փորձառություն ձեռք բերելուց հետո, ՀՀ ԱՎԾ կարող հետազոտության մեջ ընդգրկել նաև գեր փոքր կազմակերպությունները, քանի որ դրանք կազմում են Հայաստանի բիզնես ժողովրդագրության կարևոր մասը:

4.3 Ընտրանք

Գալիք տարիների համար կկազմվի պատահականորեն շերտավորված ընտրանք: Առաջին հաշվառման տարվա համար հնարավոր է, որ իրականացվի համատարած հաշվառում : Ընտրանքի չափսի հաշվառման մեջ հարկավոր է հաշվի առնել, որ այն պետք է ապահովի բոլոր գնահատված ընթացակարգերի համար վստահելի և ներկայացուցչական արդյունքներ:

Շերտավորման համար հարկավոր է ձևավորել որքան հնարավոր է միանման ստրատա: Ստրատան պետք է նվազագույնը ընդգրկի տարածման համար բաշխումներ, սակայն հնարավոր է, որ կօգտագործվի ավելի մանրամասն շերտավորում ավելի արդյունավետ արդյունքներ ստանալու համար: (Արդյունավետությունը այստեղ նշանակում է միևնույն ընտրանքի չափսի գնահատումների ավելի մեծ վստահելիություն):

Տարբեր ստրատաներից կստացվեն տարբեր համամասնություններ: Ամենախոշոր կազմակերպություններից կընտրավեն կազմակերպությունների 100 տոկոսը (կամ մոտ 100 տոկոսը), մինչդեռ ավելի փոքր կազմակերպություններից համամասնությունը կլինի ավելի փոքր: Ապագայում, հնարավոր է հաշվի առնռել ընտրանքի ավելի մշակված օպտիմալացում, քանի որ հասանելի կլինի ավելի շատ տեղեկատվություն հետազոտություններից:
Առաջին տարվա համար նախընտրելի է իրականացնել համատարած հաշվառում, որը կներառի թիրախային համակցության բալոր կազմակերպությունները և կտրամադրի ավելի ամբողջական նկարագիր: Այնուամենայնիվ, այն պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ տվյալների հավաքագրման համար:

4.4 Սխալների ուղում և որակի վերահսկում

Անհրաժեշտ է ուղղել տրամաբանական սխալները՝հնարավորության դեպքում կազմակերպությունների հետ կրկնակի կապ հաստատելու միջոցով:

Բացակայող տեղեկատվության իմպուտացիա որպես կանոն չի իրականացվի, քանի որ այն ընդգրկված չէ ԵՄ կանոնակարգի մեջ:

4.5 Կշռման ընթացակարգեր

Բոլոր որակական փոփոխականների համար (հիմնականում այո/ոչ պատասխաններ) դիտարկումները կշռվում են համապատասխան ստրատային պատկանող կազմակերպությունների քանակով: Հավելված 5 ներկայացված է կշռման ընթացակարգի կարևորությունը:

Քանակական փոփոխականների համար (հիմնականում տոկոսներով հավաքագրվող օր՝ համակարգիչ օգտագործող աշխատակիցների տոկոսայյին հարաբերակցությունը, համակարգիչների ցանցերի միջոցով ստացված պատվերների շրջանառության տոկոսային հարաբերությունը) դիտարկումները կշվում են այս տոկոսների հիմնական փոփոխականին համաձայն օր՝աշխատակիցների թվաքանակով, երբ փոփոխականը՝

աշխատակիցների տոկոսային հարաբերություն է, և ընդհանուր շրջանառությամբ, եթե փոփոխականը շրջանառության տոկոսային հարաբերություն է և այլն:

4.6 Տարածում

Տարածման կատեգորիաները կլինեն ընդամենը Հայաստանի համար և, ի լրումն կլինի բաշխում չափսի խմբի և ոլորտի համաձայն (ոչ համախմբված):

<u>Բաշխում ըստ ոլորտի տեսակի</u>
Բաշխումը ըստ ոլորտի կսահմանվի փորձնական հետազատության արդյունքների վերլուծությունից հետո: Հավանաբար կիրականացվի NACE- խմբերի շերտավորում և ագրեգացիա 4-5 խմբերի:

<u>Բաշխում չափսի խմբերին համաձայն</u>
10-29 աշխատակիցներ
30-49 աշխատակիցներ
50-99 աշխատակիցներ
100-249 աշխատակիցներ
250 աշխատակիցներ և ավելին

<u>Հետազատության արդյունքների (վիճակագրական տեղեկատվության) հնարավոր տարածումը</u>

- Մամուլի հաղորդագրություն – հետազոտության հիմնական արդյունքները
- Հիմնական տեղեկատվություն վեբ կայքում (հիմնական աղյուսակներ)
- Մանրամասն տեղեկատվություն տվյալների բազայում՝ ARMSTATBANK.AM
- Հիմնական տեղեկատվությունը ամսեկան հրապարակումներ
- Տարեկան հրապարակում "Ինֆորմացիոն տեխնոլոգիաները Հայաստանում" – ՏՀՏ վիճակագրության մասին ընդհանուր տեղեկատվություն և հետազոտությունները (կարող է ներկայացվել ՏՀՏ հատվածի վիճակագրության հետ համատեղ որպես հրապարակման առանձին հատված)
- Հատուկ վերլուծություն կարիքների և պահանջների համաձայն:

4.7 Հարցաթերթ

Փորձնական հետազատության համար մշակվեց հարցաթերթ, որը ներառում էր ԵՄ փոփոխականներ՝ մասնավորապես 2011 թ. հետազոտությունից: Ամբողջական հետազոտության համար կօգտագործվի միևնույն հարցաթերթը, որի մեջ ներառված կլինեն աննշան փոփոխություններ և անհրաժեշտ բարելավումներ:

Հնարավոր է ավելացնել նոր հարցեր և փորձնական հետազոտության արդյունքների գնահատումից հետո այն հարցերը, որոնք ունեն ցածր որակ կարող են հանվել հարցաթերթից: Այնուամենայնիվ, կիրականացվեն միայն անհրաժեշտ փոփոխություններ և հարցերի ընդհանուր քանակը չի փոխվի որակին առնչվող բացասական ազդեցությունը:

<u>Ապագա վերանայումներ</u>
Ժամանակի ընթացքում փոփոխության կենթարկվի հարցաթերթը՝ համաձայն նոր տեխնոլոգիաների հայտնության հետ:

ԵՄ երկրներում մշակվում է նոր հարցաթերթ յուրաքանչյուր տարի, որը պարունակում է նոր հարցեր և փոփոխության են ենթարկվում հին հարցերը: ՀՀ ԱՎԾ կարող է նույնպես իրականացնել բովանդակության տարեկան արդիականացում:

Որպես օժանդակություն ՀՀ ԱՎԾ կհետևի ԵՄ հարցաթերթի զարգացումներին ազգային մակարդակի վրա վերանայումներ կատարելու համար: Ի լրումն, պետք է հաշվի առնվեն նախորդ ԵՄ հարցաթերթերի թեմատիկ հարցերը ազգային հարցերի հետ համատեղ:

ՀՀ ԱՎԾ նաև հաշվի կառնի շահառուների կարիքները և իրենց փորձառությունը տեխնոլոգիաների բնագավառում: Հիմնական փոփոխականների համար ժամանակային շարքեր ունենալու համար հիմնական հարցերը կմնան հարցաթերթում 5 տարվա ընթացքում:
Այն դեպքում, եթե ապագա հետազոտություններում ընդգրկվեն միկրո կազմակերպություններ կօգտագործվի ավելի քիչ հարցեր պարունակող հարցաթերթ, որտեղից կհանվեն փոքր բիզնեսին առնչություն չունեցող հարցերը:

4.8 Տվյալների հավաքագրման մեթոդ

Տվյալների հավաքագրումը կիրականացվի դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով: Բյուջեում բավարար ֆինանսավորման բացակայության դեպքում հետազոտությունը կիրականացվի փոստի միջոցով: Հասցեատերը կլինի ՏՀՏ ղեկավարը/ կազմակերպության ՏՀՏ պատասխանատուն կամ տնօրենը:

4.9 Հարցազրուցավարների վերապատրաստում

Նախքան տվյալների հավաքագրումը կիրականացվի վերապատրաստում հարցազրուցավարների համար: Բոլոր հարցերը կներկայացվեն հարցազրուցավարներին, և անհրաժեշտություն դեպքում մանրամասն կներկայացվի դրանց բացատրությունը: ՏՀՏ ոլորտում մասնագիտացված ներկայացուցիչը կարող է հանդես գալ որպես դասընթացավար վիճակագրության աշխատակիցներին սատարելու համար, երբ հարցազրուցավարների կողմից ներկայացվեն տեխնիկական հարցեր:

4.10 Հաջորդ քայլը՝ աշխատանքային ծրագիրը և առաջին հետազոտությունը

Ֆինանսավորման առկայության դեպքում նպատակահարմար է իրականացնել առաջին ամբողջական հետազոտությունը 2013թ: ԵՄ տվյալների հավաքագրումը իրականացվում է տարվա առաջին եռամսյակի ընթացքում: Այսպիսով, առաջարկվում է սկսել տվյալների հավաքագրումը Հայաստանում որքան հնարավոր է շուտ հետազոտության առաջին տարվա ընթացքում: Առաջին հետազոտության համար անհրաժեշտ գործունեություններն են՝

Գործունեություն	Ժամանակահատված	Դիտողություն
Որոշում -տվյալների հավաքագրման տեսակ -տարածման կատեգորիաներ -համատարած հաշվառում, կամ ընտրանք	Դեկտեմբեր-հունվար	
Բովանդակության արդիականացում - Հարցաթերթի վերանայում - Դիտողություններ շահառուների կողմից	փետրվար	

Հարցաթերթի ամփոփում	փետրվար	
Ընտրանքի դիզայն/ընտրանքի կազմում	Փետրվար-մարտ	
Համակարգի նախապատրաստում որակի վերահսկման ստուգումների և տվյալների մուտքագրման համար	Փետրվար-մարտ	
Հաստատում վիճ. Պետական խորհրդի կողմից + փորձաքննում Արդարադատության նախարարության կողմից	Մարտ	Որպես կանոն 3-4 շաբաթ
Հարցաթերթերի տպագրում	Մարտ-ապրիլ	
Հարցազրուցավարների վերապատրաստում	Մարտի վերջ-ապրիլի սկիզբ	Տարածաշրջանային հարցազրուցավարները կժամանեն ՀՀ ԱՎԾ
Տվյալների հավաքագրում	Ապրիլ- մայիս	
Աշխատանքների ամփոփում հարցազրուցավարների հետ	Մայիս –հունիս	
Տվյալների մուտքագրում	Հունիս	
Սխալների ուղղում	Հունիս-հուլիս	
Կազմակերպությունների հետ կրկնակի կապի հաստատում	Հունիս-հուլիս	
Հաշվարկներ/կշռում	Օգոստոս-սեպտեմբեր	
Զեկույցի նախապատրաստում (աղյուսակներ, գծապատկերներ, հրապարակում)	Հոկտեմբեր-նոյեմբեր	
Մամուի հաղորդագրության նախապատրաստում	Նոյեմբեր	
Հրապարակում	Նոյեմբերի վերջ	

Հետագա տարեկան գործընթացը

Հետագա տարիների համար առաջարկվում է մշակել տարեկան գործողությունների ծրագիր վերանայման և պլանավորման համար, օրինակ համաձայն ներքոբերյալ ծրագրի՝

Գործունեություն	**Ժամանակահատված**	**Դիտողություն**
Ամփոփում, նախորդ տարիների փորձը	Նոյեմբեր , t-1 տարի	
Կապի հաստատում շահառուների հետ, հաջորդ տարվա սպառողների կարիքների քննարկում և ԵՄ ընթացիկ հարցաթերթի ստուգում	Նոյեմբեր-դեկտեմբեր,t-1 տարի	t Տարվա մոդել հարցաթերթը, որը հաստատվում է t-1 տարվա աշնանը
Հարցաթերթի հաստատում	Փետրվար	
Ընտրանք	Հունվար-փետրվար	
Տվյալների հավաքագրում	Մարտ -ապրիլ	
Տարածու	Հոկտեմբեր-նոյեմբեր	

Հավելված 1 Նախագիծ Տեխնիկական առաջադրանք (Զ.6); 2012թ. նոյեմբերի 19 – 23-ը

Բաղադրիչ Ա Որակի Կառավարում
Բաղադրիչ Բ Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ ՀՆԱ –ի Ամբողջականության Բարելավում
Բաղադրիչ Դ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս
Բաղադրիչ Զ Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն

Բաղադրիչի պարտադիր արդյունքները

Զ բաղադրիչի պարտադիր արդյունքն է " Ձեռնարկությունների և հաստատությունների ՏՀՏ փորձնական հետազոտությունների ամբողջական իրականացում և տվյալների հրապարակում" *(պայմանագրում նշված "հետազոտությունը" փոխարինվել է "փորձնական հետազոտության" հետ)*

Գործունեություն Զ6 Ներդրման վերանայում

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակն է բաղադրիչի աշխատանքի ամփոփումը, հետագա աշխատանքների ուղղության ներկայացումը, ինչպես նաև բաղադրիչի արդյունքների կայունության ապահովումը:

2. Գործունեության ակնկալվող արդյունքը

Գործունեության ակնկալվող արդյունքներն են՝

- Նախագծի գործընթացների ձեռք բերված արդյունքների վերանայում
- Շահառուների մասնակցությամբ սեմինար ձեռք բերված արդյունքները քննարկելու նպատակով
- Հայաստանի ՏՀՏ վիճակագրության զարգացման համար ռազմավարության նախագծի մշակում
- Կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման պարբերական հետազոտության մեթոդաբանության օժանդակություն

3. Ծրագրի մասնակիցներ

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ (ՇԵ բաղադրիչի ղեկավար;)
Տկն. Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի պետ
Տկն. Ինգա Բարոյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի գլխավոր մասնագետ

Պրն. Մարտին Լունդո, Բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր խորհրդատու,Դանիայի վիճակագրական ծառայություն (ԱՊ Բաղադրիչի ղեկավար)
Ինգրիտ Պերսոն, Բաժնի պետ, Շվեդիայի վիճակագրություն

Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը

“Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ”
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

4. ԱՊ Փորձագետների հանդիպման ծրագիր

Ժամը	**Վայրը**	**Միջոցառում**	**Նպատակ/Միջոցառման մանրամասները**
Երկուշաբթի, նոյեմբերի 19, առավոտյան	Կոնգրես հյուրա-նոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
կեսօր	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Ներկայիս կարգավիճակը՝ ՇԵ բաղադրիչի ղեկավարի ներկայացումը զարգացումների և ներքին առաջխաղացումների վերաբերյալ վերջին Զ 4.2 հետո (2012 թ. սեպտեմբեր).
Երեքշաբթի, նոյեմբերի 20, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետնե-րի հետ	Նախապատրաստություն կեսօրվա հանդիպմանը
կեսօր	ՀՀ ԱՎԾ	Սեմինար շահառուների մասնակցու-թյամբ	Հայաստանի կազմակերպություններում և հաստատություններում ՏՀՏ օգտագործման փոձնական հետազոտության զեկույցի քննարկում և ներկայացում. *Շնորհանդեսներ* 1.Փորձնական հետազոտության զեկույց (ՇԵ փորձագետներ) 2.ՏՀՏ վիճակագրության ռազմավարություն (ԱՊ փորձագետներ)
Չորեքշաբթի, նոյեմբերի 21, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետնե-րի հետ	Սեմինարի ընթացքի քննարկում - 1: փորձնական հետազոտության զեկույցի վերջնական տարբերակի և ամբողջական հետազոտությունների հետևանքները
կեսօր	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետնե-րի հետ	Սեմինարի ընթացքի քննարկում – 2: *Հետագա մեթոդաբանության հետևանքները–օր՝ հարցաթերթ և հրահանգներ*
Հինգշաբթի, նոյեմբերի 22, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետնե-րի հետ	3-5 տարվա ռազմավարության մշակում Հայաստանի ՏՀՏ վիճակագրության համար
կեսօր	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետնե-րի հետ	Հայաստանի նախարարություններում ՏՀՏ օգտագործման մամլուլի ասուլիսի հնարավորությունը
Որբաթ, նոյեմբերի 23 առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպում-	Առաքելության զեկույցի աշխատանքներ և նախապատրաստում առաքելության

		ներ	ամփոփմանը.
կեսօր	ՀՀ ՎԾ	Առաքելության ամփոփում ՇԵ նախագծի ղեկավարի հետ	Եզրակացություններ և առաջարկություններ:

3: Հանդիպումներ անձանց հետ

Գագիկ Անանյան անդամ	Վիճակագրական պետ. խորհուրդի
Գայանե Վարդանյան, 1-ին կարգի մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Անահիտ Առաքելյան,1-ին կարգի մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Աննա Անտոնյան	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Արևիկ Սազումյան, Առաջատար մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Ինգա Բարոյան, Գլխավոր մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Հեղինե Բաբայան, Գլխավոր մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Անահիտ Հարությունյան – Բաժնի պետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Գարիկ Խաչատրյան – Գլխավոր մասնագետ	Բիզնես ռեգիստրի բաժին
Արմինե Շաբոյան Մեթոդաբանության բաժին	

Հավելված 4: Մամուլի հաղարդագրություն՝ ՏՀՏ-ի օգտագործումը հայաստանի նախարարություններում

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. ԵՐԵՎԱՆ **Դեկտեմբերի 13, 2012թ.**

Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործումը Հայաստանի հանրապետության նախարարություններում Եվրոմիության Թվինինգ ծրագրի ներքո իրականացված փորձնական հետազոտության զեկույցի մասին

2011թ. հունվարից Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում մեկնարկել է «Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը» երկամյա պայմանագիրը: Խնդրո առարկա պայմանագրի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» (ՏՀՏ) բաղադրիչի շրջանակում Դանիայի, Լիտվայի և Շվեդիայի վիճակագրական ծառայությունների փորձագետների օժանդակությամբ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից 2012թ. ՀՀ նախարարություններում իրականացվել է փորձնական հետազոտություն, որի նպատակն էր ձևավորել վիճակագրական տեղեկատվություն նախարարություններում ՏՀՏ օգտագործման վերաբերյալ, որն էլ հիմք կհանդիսանա հետագայում կառավարման հատվածի այլ ոլորտներում ՏՀՏ օգտագործման հետազոտությունների համար: Մշակվել է նաև հարցաթերթ տնտեսավարող սուբյեկտների համար և փորձարկվել մի շարք կազմակերպություններում:

ՏՀՏ օգտագործումը ՀՀ նախարարություններում

Փորձնական հետազոտությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության 18 նախարարություններից 17-ում (բացառությամբ ՀՀ պաշտպանության նախարարության), որով և ապահովել է հետազոտության արդյունքների ներկայացուցչությունը:

Հետազոտությունը վերաբերվել է ՏՀՏ օգտագործման հետևյալ ցուցանիշների ուսումնասիրմանը՝ համակարգիչների օգտագործումը, այդ թվում, ըստ տեսակների, ներքին համակարգչային ցանցի կամ ինտրանետի օգտագործումը, անհատական մարդկային ռեսուրսների ծառայություններին էլեկտրոնային եղանակով նախարարության աշխատողների հասանելիությունը (մատչելիությունը), համացանցային (ինտերնետային) կապի տեսակները և դրանց հասանելիությունը, համացանցի (ինտերնետի) ներբեռնման արագությունը, հանրային ծառայությունների տրամադրման տեսակներն ըստ կապի տեսակների, կայքէջի առկայությունը և դրա միջոցով տարբեր տեղեկություններին հանրային հասանելիությունը և այլն:

Ըստ հետազոտության արդյունքների, 2012թ. հուվարին հետազոտության մեջ ընդգրկված բոլոր նախարարություններում օգտագործվել են անհատական, դյուրակիր (օրինակ՝ լափթոփ, նոթբուք, նեթթոփ), անհատական թվային և օժանդակիչ (PDA) տեսակի համակարգիչներ: Սակայն, աշխատողների միայն 89%-ն են օգտագործել համակարգիչներ:

Նախարարությունների 94%-ն ունեցել են ներքին հաղորդակցման ինտրանետ համակարգ-չային ցանց (օրինակ, LAN տեղական ցանց՝մեկ շենքում կամ իրար մոտ շենքերում գտնվող համակարգիչների հաղորդակցման համար):

Ուշագրավ է, որ 2012թ. հունվարին հետազոտված նախարարությունների միայն 59%-ն է ապահովել էլեկտրոնային եղանակով անհատական մարդկային ռեսուրսների սպասարկմանն առնչվող ծառայություններին (աշխատաժամերի, արձակուրդի դիմումի գրանցման համակարգերը, վճարման թերթիկների դիտման կամ բեռնավորման հնարավորությունը և այլն) աշխատողների մատչելիությունը (հասանելիությունը):

2012թ. հունվարին բոլոր նախարարություններն ունեցել են համացանցային (ինտերնետ) կապ: Համացանցային (ինտերնետային) կապի հասանելիություն ունեցող աշխատողների մասնաբաժինն աշխատողների միջին տարեկան թվաքանակում կազմել է 76%: Ընդ որում, նախարարություններում օգտագործվող համացանցային (ինտերնետային) կապի 88%-ը բաժին է ընկել մալուխային, օպտիկամանրաթելային, E1 կամ E3 1 և ATM 2 մակարդակներով վարձակալված գծերին, Frame Relay, Metro-Ethernet, PLC - Powerline հաղորդակցման, ինչպես նաև ֆիքսված անլար կապին:



Նախարարությունների 71%-ի կողմից համացանցի (ինտերնետի) ամենաարագ ներբեռնման արագությունը կազմել է 2.1 Մբ/վ-10.0 Մբ/վ միջակայքը:



Ըստ հանրային ծառայությունների մատուցման եղանակների առանձին տեսակների 2012թ. հունվարին նախարարությունների կողմից դրանց 94%-ը տրամադրվել է ուղղակի կապի (այցելություն-հանդիպում), ավանդական փոստի և կայքէջի միջոցով (եղանակներով): Համացանցային հեռախոսակապի եղանակով տրամադրված ծառայությունների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 18 %:



2012թ. հունվարին հետազոտված բոլոր նախարարություններն ունեցել են պաշտոնական կայքէջ: Ընդ որում, բոլոր կայքէջերում հասանելի են եղել այնպիսի տեղեկատվություններ, ինչպիսիք են՝ «Հաստատության կառուցվածքը», «Հաստատության գործունեության մասին տեղեկատվությունը», «Հաստատության գործունեության մասին նորությունները» և այլն: Նախարարությունների 87%-ը կայքէջի միջոցով ապահովել է հասանելիությունն այն տեղեկատվությանը, որը վերաբերվել է նախարարության կողմից մատուցվող ծառայություններին:

2012թ. հունվարին նախարարությունների միայն 71%-ն է իր հաղորդագրություններում օգտագործել էլեկտրոնային ստորագրություն՝ կիրառելով գաղտնի ծածկագրերի (կոդերի) մեթոդ-ները, որով հավաստիացվել է հաղորդագրության իսկությունը և ամբողջականությունը՝ ստորա-գրողին նույնականացնելու հնարավորությամբ և այլն:

Պարզաբանումների համար տեղեկատու՝

☎ *523 356 Վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժին*

☎ *587 623 Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին*

Հավելված 5. Կշռման իրականացման կարևորության օրինակ

Կշռման գործընթացի օրինակ: Ներքոբերյալ օրինակում ներկայացված են արդյունքների տարբերությունները այն դեպքում, երբ իրականացվում է կշռում և համապատասխանաբար չի իրականացվում կշռում:

POPULATION	Size class			
Industry	10-49	50-249	250-	Sum
A	60	20	10	90
B	20	40	10	70
Total	**80**	**60**	**20**	**160**

SAMPLE	Size class			
Industry	10-49	50-249	250-	Sum
A	10	10	5	25
B	3	8	10	21
Sum	13	18	15	46

Weights	Size class		
Industry	10-49	50-249	250-
A	6,00	2,00	2,00
B	6,67	5,00	1,00

Q1 - YES	Size class			
Industry	10-49	50-249	250-	Sum
A	1	7	4	12
B	1	2	7	10
Sum	2	9	11	22

Q1 - Yes, weighted	Size class			
Industry	10-49	50-249	250-	Sum
A	6,00	14,00	8,00	28,00
B	6,67	10,00	7,00	23,67
Sum	12,67	24,00	15,00	51,67

RESULTS BY INDUSTRY	Population	Weighted YES	**in percent**	Non-weighted YES	
A	90	28,00	**31%**	12	48%
B	70	23,67	**34%**	10	48%

RESULTS BY SIZE CLASS	Population	Weighted YES	**in percent**	Non-weighted YES	
10-49	80	12,67	**16%**	2	15%
50-249	60	24,00	**40%**	9	50%
250-	20	15,00	**75%**	11	73%